**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/2-1**

ք. Երևան «29» մարտի 2019 թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Պապիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 70 674 000 (յոթանասուն միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Կողմերի միջև կնքված համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

**Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ** ____________________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլիներս» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կոմիտաս 36գ. բն 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464820100
ՀՎՀՀ 00130286
Տնօրեն

**Գ. ՊԱՊԻԿՅԱՆ** ____________________
/ստորագրություն/
Կ.Տ/

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 90911110/502 | Շենքերի մաքրման ծառայություններ:<br>Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցվող տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝<br>**Ամենօրյա մաքրման ծառայություններ**<br>ՀՀ ՊԵԿ-ի<br>-սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, ներքին ցուցանակների, բռնակների, դռների, պատուհանագոգերի,մանրահատակի, սալիկապատ և լամինատե հատակի մաքրում հատուկ նյութերով, ինչպես նաև փոշեկուլով:<br>-գրասենյակային կահույքի և պարագաների, տեխնիկայի արտաքին մաքրում,<br>-սանհանգույցների ամենօրյա մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում,լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/՝ համաձայն պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված | դրամ | 5 184 000 | 1 | **Արագածոտնի մարզ**<br>1. ք. Աշտարակ, Պռոշյան 29 – (1464.16 քմ.) | Ծառայության մատուցումն իրականացվում, այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մաքրման գրաֆիկի<br>- աղբամանների դատարկում, մաքրում, տոպրակների տեղադրում և շենքից աղբահանության կազմակերպում:<br>-գորգերի փոշեզերծում փոշեկուլով<br>**Շաբաթական մաքրման աշխատանքներ**<br>-սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով<br>- արտաքին ցուցանակների մաքրում<br>**Ամսական կատարվող աշխատանքներ**<br>-ջահերի, լույսերի, օդորակիչների, տեղեկատվական վահանակների մաքրում:<br>**Եռամսյակային աշխատանքներ**<br>- դրսի ապակիների, պատուհանների մաքրում:<br>**Կիսամյակային աշխատանքներ**<br>-շերտավարագույրների, վարագույրների, դռների լվացում, քիմ. մաքրում և արդուկում<br>**Տարեկան աշխատանքներ**<br>Տարին մեկ անգամ նշված հասցեների շենքերի ճակատային մասի լվացում:<br>ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում:<br>**Ձյան տեղումների դեպքում՝**<br>Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան և սառույցների հեռացման աշխատանքների կատարում՝ ըստ պատվիրատուի պահանջի:<br>**Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցնող տարածքներում ծառայությունը մատուցելու ընթացքում ունենահետևյալ սարքավորումները՝ լվացող փոշեկուլ 1 հատ, պրոֆեսիոնալ փոշեկուլներ՝ նախատեսված փոքր տարածքների համար 1 հատ:**<br>**Աշխատողների քանակը առնվազն 3 մարդ:** | | | | | |
| 3 | 90911110/505 | Շենքերի մաքրման ծառայություններ:<br>Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային | դրամ | 5 430 000 | 1 | **Գեղարքունիքի մարզ**<br>1. ք. Գավառ, | Ծառայության մատուցումն իրականացվում, այդ նպատակով |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ստորաբաժանումների կողմից զբաղեցվող տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝<br>**Ամենօրյա մաքրման ծառայություններ**<br>ՀՀ ՊԵԿ-ի<br>-սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, ներքին ցուցանակների, բռնակների, դռների, պատուհանագոգերի, մանրահատակի, սալիկապատ և լամինատե հատակի մաքրում հատուկ նյութերով, ինչպես նաև փոշեկուլով:<br>-գրասենյակային կահույքի և պարագաների, տեխնիկայի արտաքին մաքրում,<br>-սանհանգույցների ամենօրյա մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/՝ համաձայն պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված մաքրման գրաֆիկի<br>- աղբամանների դատարկում, մաքրում, տոպրակների տեղադրում և շենքից աղբահանության կազմակերպում:<br>- գորգերի փոշեզերծում փոշեկուլով<br>**Շաբաթական մաքրման աշխատանքներ**<br>-սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով<br>- արտաքին ցուցանակների մաքրում<br>**Ամսական կատարվող աշխատանքներ**<br>-ջահերի, լույսերի, օդորակիչների, տեղեկատվական վահանակների մաքրում:<br>**Եռամսյակային աշխատանքներ**<br>- դրսի ապակիների, պատուհանների մաքրում:<br>**Կիսամյակային աշխատանքներ**<br>- շերտավարագույրների, վարագույրների, դրոշների լվացում, քիմ. մաքրում և արդուկում<br>**Տարեկան աշխատանքներ**<br>Տարին մեկ անգամ նշված հասցեների | | | | Հերոս քաղաք Նովոռոսիյսկի փող. 4- (488 քմ.)<br>2. ք. Սևան, Սայաթ-Նովա-1/1- (497 քմ.) | համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | շենքերի ճակատային մասի լվացում: ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում: **Ձյան տեղումների դեպքում`** Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան և սառույցների հեռացման աշխատանքների կատարում` ըստ պատվիրատուի պահանջի: **Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցնող տարածքներում ծառայությունը մատուցելու ընթացքում ունենա հետևյալ սարքավորումները`լվացող փոշեկուլ 1 հատ, պրոֆեսիոնալ փոշեկուլներ` նախատեսված փոքր տարածքների համար 2 հատ: Աշխատողների քանակը առնվազն 3 մարդ:** | | | | |
| 5 | 90911110/507 | Շենքերի մաքրման ծառայություններ: Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցվող տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները` **Ամենօրյա մաքրման ծառայություններ** ՀՀ ՊԵԿ-ի -սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, ներքին ցուցանակների, բռնակների, դռների, պատուհանագոգերի, մանրահատակի, սալիկապատ և լամինատե հատակի մաքրում հատուկ նյութերով, ինչպես նաև փոշեկուլով: -գրասենյակային կահույքի և պարագաների, տեխնիկայի արտաքին մաքրում, -սանհանգույցների ամենօրյա մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող | դրամ | 6 900 000 | 1 | **Կոտայքի մարզ** 1. ք. Հրազդան, Սպանդարյան-24/1-24/2- (1123.9 քմ.) 2. ք. Աբովյան, Բարեկամության հր. 1- (952.3 քմ.) | Ծառայության մատուցումն իրականացվում, այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մակերեսների մաքրում և ախտահանում/` համաձայն պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված մաքրման գրաֆիկի<br>-աղբամանների դատարկում, մաքրում, տոպրակների տեղադրում և շենքից աղբահանության կազմակերպում:<br>-գորգերի փոշեզերծում փոշեկուլով<br>**Շաբաթական մաքրման աշխատանքներ**<br>-սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով<br>- արտաքին ցուցանակների մաքրում<br>**Ամսական կատարվող աշխատանքներ**<br>-ջահերի, լույսերի, օդորակիչների, տեղեկատվական վահանակների մաքրում:<br>**Եռամսյակային աշխատանքներ**<br>- դրսի ապակիների, պատուհանների մաքրում:<br>**Կիսամյակային աշխատանքներ**<br>-շերտավարագույրների, վարագույրների,դռների լվացում, քիմ. մաքրում և արդուկում<br>**Տարեկան աշխատանքներ**<br>Տարին մեկ անգամ նշված հասցեների շենքերի ճակատային մասի լվացում:<br>ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում:<br>**Ձյան տեղումների դեպքում`**<br>Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան և սառույցների հեռացման աշխատանքների կատարում` ըստ պատվիրատուի պահանջի:<br>**Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցնող տարածքներում ծառայությունը մատուցել ու ընթացքում ունենահետևյալ սարքավորումները` լվացող փոշեկուլ 1 հատ,պրոֆեսիոնալ փոշեկուլներ`նախատեսված փոքր տարածքների համար 2 հատ:**<br>**Աշխատողների քանակը առնվազն 4 մարդ:** | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 90911110/508 | Շենքերի մաքրման ծառայություններ:<br>Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցվող տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝<br>**Ամենօրյա մաքրման ծառայություններ**<br>ՀՀ ՊԵԿ-ի<br>-սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, ներքին ցուցանակների, բռնակների, դռների, պատուհանագոգերի, մանրահատակի, սալիկապատ և լամինատե հատակի մաքրում հատուկ նյութերով, ինչպես նաև փոշեկուլով:<br>-գրասենյակային կահույքի և պարագաների, տեխնիկայի արտաքին մաքրում,<br>-սանհանգույցների ամենօրյա մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/՝ համաձայն պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված մաքրման գրաֆիկի<br>- աղբամանների դատարկում, մաքրում, տոպրակների տեղադրում և շենքից աղբահանության կազմակերպում:<br>- գորգերի փոշեզերծում փոշեկուլով<br>**Շաբաթական մաքրման աշխատանքներ**<br>-սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով<br>- արտաքին ցուցանակների մաքրում<br>**Ամսական կատարվող աշխատանքներ**<br>-ջահերի, լույսերի, օդորակիչների, տեղեկատվական վահանակների մաքրում:<br>**Եռամսյակային աշխատանքներ**<br>- դրսի ապակիների, պատուհանների մաքրում:<br>**Կիսամյակային աշխատանքներ**<br>- շերտավարագույրների, | դրամ | 35 640 000 | 1 | **Շիրակի մարզ**<br>1. ք. Գյումրի, Հովսեփյան 1 – (1021.1 քմ.)<br>2. ք. Գյումրի Մ.Խորենացի 21- (436.8 քմ.)<br>3. գ. Բավրա, մաքսակետի շենք- (6 000 քմ.) | Ծառայության մատուցումն իրականացվում, այդ նպատակով համապատաս խան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | վարագույրների,դրոշների լվացում, քիմ. մաքրում և արդուկում<br>**Տարեկան աշխատանքներ**<br>Տարին մեկ անգամ նշված հասցեների շենքերի ճակատային մասի լվացում:<br>ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում:<br>**Ձյան տեղումների դեպքում՝**<br>Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան և սառույցների հեռացման աշխատանքների կատարում՝ ըստ պատվիրատուի պահանջի:<br>**Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցնող տարածքներում ծառայությունը մատուցելու ընթացքում ունենա հետևյալ սարքավորումները՝ լվացող փոշեկուլ 1 հատ, պրոֆեսիոնալ փոշեկուլներ՝նախատեսված փոքր տարածքների համար 3 հատ։ Աշխատողների քանակը առնվազն 23 մարդ:** | | | | | |
| 7 | 90911110/509 | Շենքերի մաքրման ծառայություններ:<br>Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցվող տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝<br>**Ամենօրյա մաքրման ծառայություններ**<br>ՀՀ ՊԵԿ-ի<br>-սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, ներքին ցուցանակների, բռնակների, դռների, պատուհանագոգերի,մանրահատակի, սալիկապատ և լամինատե հատակի մաքրում հատուկ նյութերով, ինչպես նաև փոշեկուլով:<br>-գրասենյակային կահույքի և պարագաների, տեխնիկայի արտաքին մաքրում,<br>-սանհանգույցների ամենօրյա մաքրում քիմիական նյութերով | դրամ | 17 520 000 | 1 | **Սյունիքի մարզ**<br>1. ք.Կապան, Ռ. Մինասյան 20ա-(986.6 քմ.)<br>2. գ. Շաքե, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ-(288.1 քմ.)<br>3. գ.Կարճևան Մայրուղի-4-(2767.9 քմ.)<br>4.ք.Գորիս, Տաթևացի 9-(472.3 քմ.) | Ծառայության մատուցումն իրականացվում, այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում,լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/` համաձայն պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված մաքրման գրաֆիկի<br>- աղբամանների դատարկում, մաքրում, տոպրակների տեղադրում և շենքից աղբահանության կազմակերպում:<br>- գորգերի փոշեզերծում փոշեկուլով<br>**Շաբաթական մաքրման աշխատանքներ**<br>-սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով<br>- արտաքին ցուցանակների մաքրում<br>**Ամսական կատարվող աշխատանքներ**<br>-ջահերի, լույսերի, օդորակիչների, տեղեկատվական վահանակների մաքրում:<br>**Եռամսյակային աշխատանքներ**<br>- դրսի ապակիների, պատուհանների մաքրում:<br>**Կիսամյակային աշխատանքներ**<br>- շերտավարագույրների, վարագույրների,դրոշների լվացում, քիմ. մաքրում և արդուկում<br>**Տարեկան աշխատանքներ**<br>Տարին մեկ անգամ նշված հասցեների շենքերի ճակատային մասի լվացում: ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում:<br>**Ձյան տեղումների դեպքում`**<br>Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան և սառույցների հեռացման աշխատանքների կատարում` ըստ պատվիրատուի պահանջի:<br>**Կատարողը պարտավոր է ՀՀ ՊԵԿ վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցնող տարածքներում ծառայությունը մատուցել ու ընթացքում ունենահետևյալ սարքավորումները` լվացող փոշեկուլ 1 հատ, պրոֆեսիոնալ** | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | փոշեկուլներ՝նախատեսված փոքր տարածքների համար 4 հատ: Աշխատողների քանակը առնվազն 10 մարդ: | | | | | |

*Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

**ՊԵԿ սահմանային մաքսային անցակետերում կատարողը պետք է ապահովի առնվազն 3 հերթապահ՝ յուրաքանչյուրը 24 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

***Կատարողը պարտավոր է մաքրման ծառայություններն այնպես կազմակերպել, որպեսզի կատարողի կողմից մաքրված տարածքը ցանկացած պահի լինի պատշաճ վիճակում և չխոչընդոտի Կոմիտեի աշխատակիցների բնականոն աշխատանքին:Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները և սարքավորումներն ամբողջությամբ ձեռք են բերվում Կատարողի կողմից:Մաքրման աշխատանքների կազմակերպման ժամերը նախապես համաձայնեցվում են պատվիրատուի հետ, ընդ որում կատարողը պարտավոր է ապահովել ցերեկային և գիշերային հերթապահություն՝ (գիշերային հերթապահությունը միայն ՀՀ ՊԵԿ սահմանային մաքսային անցակետերում, խիստ անհրաժեշտության դեպքում նաև ՊԵԿ տարածքային շենքերում):Ապահովել կոնտակտային անձի առկայությունը, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացուցային օր՝ շուրջօրյա:

****ՊԵԿ-ի կողմից տրամադրվող նյութերն ու պարագաները (զուգարանի թուղթ, հեղուկ օճառ) կատարողը պարտավոր է տեղադրել ըստ համապատասխան տեղերի և նշանակության:

*****Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի համազգեստով,կատարողի տարբերանշանով, համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

****** Կատարողը պարտավոր է իր մոտ աշխատանքի ընդունել ՀՀ ՊԵԿ աշխատակազմում աշխատող հավաքարարներին՝ 100.000 ՀՀ դրամ աշխատավարձով (առանց հարկերի), իսկ նրանց աշխատանքից ազատումը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ:

******* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

******** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

**Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ** _______________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլիներս» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կոմիտաս 36գ. բն 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464820100
ՀՎՀՀ 00130286
Տնօրեն

**Գ. ՊԱՊԻԿՅԱՆ** _______________
/ստորագրություն/
Կ.Տ/

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ | հվհհ ____________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________________ | ________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 2.1*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________ -ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

__________________________
ազգանուն, անուն

__________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

__________________________
ազգանուն, անուն

__________________________
ստորագրություն